


ԲԱՆՎ. ԳՅՈՒՂ. ԳԵՂԱՐՎԵՍ. ԳՐԱԴԱՐԱՆ

ԶԵՎ ԸՆԹԱՑՈՒՅԹ

ԱՆՄԵՂ ԱԲԴՈՒՀԵԼ

(Պ. Ա. Տ Մ Ա. Ա. Մ Ք.)

Գրացերենից բարգմանեց

Ա. ԱՌԻՇՏՐՅԱՆ

ԳԵՂԱԿԵՆ ՀՐԵՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԻՆ

ԵՎԵՀԱՆ - 1928

899.962-1 -6 NOV 2011
9-36 ԲԱՆՎ.-ԳՅՈՒՂ. ԳԵՂԱՐՎԵՍ. ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՎԱԽՆԵՒՎԻԼԻ

891.54-3

~~БИБЛИОТЕКА ТССР.~~

Н.В. № 464/2

ԱՆՄԵԼ ԱԲԴՈՒՀԿՅ

Պ Ա Տ Մ Վ Ա Մ Ք)

Արագերենից բարգմանեց

Ա. ԱՌԵՑՏՐՅԱՆ



1928

ՊԵՏՎՐԱԾԻ ՀՐԱՄԱԿԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

ՈՎ. Ե ԶԱՎԱԽԻՇՎԻԼԻՆ

Միխայիլ Զավախիշվիլին ծնվել է 1880 թվին
Բորչալվի գավառի Ծերքավ գյուղում։ Նախնական
ուսումն ստացել է Պրիվոլնոյում՝ այժմյան Ստեփա-
նավանում յեզ Դրիմի Նիկիտինո գյուղատնտեսական
դպրոցում։

1903 թվից ծառայության և մտնում Ալլահվեր-
դու պղնձահանքում։ Այդ ժամանակից ել սկսվում ե
նրա գրական գործունեյությունը։ 1906 թվին խմբա-
գրում և «Գլեխի»՝ գյուղացի շաբաթաթերթը։ 1906 թվի
վերջերին սովորումն Պարիզում։ Սորբոնի համալսարա-
նում։ 1903—1908 թվին գրում և մի քանի պատմ-
վածքներ, վորից հետո 15 տարի ընդհատում ե գրա-
կան գործունեյությունը։ 1922 թվից նորից նվիրվում
ե գրականության յեզ կարճ ժամանակվա ընթաց-
քում տալիս ե մի քանի հատոր գրվածքներ, վորոն-
ցից հայտնի յեն՝ «Կվանի Կվանանտիրիծե», «Զարու-
հիզների» յեզ Թեթրի Սաղելո։ Զավախիշվիլին
տալիս ե վրաց ժամանակակից ինտելիգենցիայի տի-
պերը յեզ ներկա գյուղի կենցաղային յերեվույթները։
Նա ուելիստ գրող ե։ Վոչ մի ժամանակակից վրաց
գրող չի արժանացել գրական այն բախտին ու հա-
սարակական գուրգուրանքին, ինչ վոր Զավախիշվի-
լին։

Թարգմանիչ

ՀԱՅՊՈԼԻԿԻՑԱՖԻ ՀՐԴ ՏՊԱՐ.
 ԳՐԱՆ. № 813 Բ. ՊԱՏՎԵՐ № 3688
 ՊԵՏՀՐԱՏ № 795 ՏԻՐԱԺ 1500



Կ 3565-63

ԱՆՄԵՂ ԱԲԴՈՒԻԼԸ

— Աբդուլ Քյարիմ, — դարձավ դատավորն Աբդուլին, — հասկացաք, ձեզ մեղադրում են կողոպուտի համար, դուք Զանգար գյուղի մոտ կողոպտել եք Վորոնցովկալի մալականներին, մեկին ծանր վիրավորել ու մի ձի յել՝ սպանել:

— Ալլահ, իլալլահ, — դառն ախ քաշեց Աբդուլը:

Դուք յերեք հոգի եյիք, ընկերներիցդ յերկուսին մինչև հիմա թագցնում եք, — չեք հայտնում, հետքը Սարվան գյուղում բացվել է, Դուք սարվանեցի յեք, չե՞:

Բալի, աղա, այո, Աբդուլը սարվանեցի յե: — Հետքն ուղիղ ձեր տան շեմքին հասավ, ի՞նչպես պատահեց այդ, պատմեցեք դատարանին:

— Վոչինչ չգիտեմ, վալլահ վոչինչ, — անկեղծ սրտով ճշաց Աբդուլը և սկսեց ճարպոտ բուռնցը-ներով ուժեղ ծեծել իր լայն կուրծքը. — Վալլահ, վոչինչ չգիտեմ, վոչինչ չգիտեմ:

— Շատ բարի, նույն որը և յեթ միլիցիան ձեր տան շվաքում քթոցի մեջ գտել ե կողոպտաված ասլրանքի մի մասը. այ, տես այս չիթը, յերսարբիչը, գլխարկը, — ցույց տալով ասաց դատավորը, — ի՞նչպես պատահեց, պատմեցեք:

— Աստված վկա, չգիտեմ, վալլահ չգիտեմ, — նորից հառաչելով սկսեց ծեծել կուրծքը:

— Պատվական Աբդուլ Քյարիմ ողի, կողոպտված մալականները ճանաչել են քեզ և քեզ են մատնացույց անում. այս փաստի դեմ ի՞նչ կարող եք ասել:

— Վալլահ, յանիլդար, վալլահ, յալան դի, դուրան հազգի, յալան դի (աստված վկա, սխալվեցին, աստված վկա սուտ ե, դուրանը վկա, սուտ ե):

— Աբդուլ Քյարիմ, պատմեցեք դատարանին, թե վորտեղ անցկացրիք այն որը:

— Այն որն առավոտյան Աբդուլը բոստանը ջրեց. Աբդուլի պառավ մայր Զովը, այ այնտեղ վոր ժողովրդի մեջ նստած ե չագրայում փաթաթված, մածուն բերեց Աբդուլին. հետո Աբդուլը տուն գնաց, մի քիչ իր կին ֆաթմայի վրա նեղացավ, վոր ֆաթման Աբդուլի սիրած «կապույտ ձին ջուր չես խմացնես»:

Աբդուլը մի ծառա ուներ — Ալի Ղուբրան. այն որն Ալին Աբդուլի տավարի հետ քոչի գնաց Սալվարի սարերը, դրա համար Աբդուլը ֆաթմային խնդրեց «կապույտ»-ին ջրել. (այ տես՝ այնտեղ ֆաթման ել նստած ե՝ Զովի կողքին) թե չե Աբդուլն եղակիսի գործեր չեր տա ֆաթմային, ենպես ե սիրում նրան, ինչպես իր յերկու աչքի լույսը. ուրեմն եսպես, Աբդուլը քիչ նեղացավ ֆաթմայի վրա, հետո բարիշեց, համբուրեց, մի փիրուղ ել՝ փեշքաշ, Խրամի գետի առուն գնաց ջուր գցելու, իրիկունը նորից տուն

դարձավ, իրիկունը դաշտից նախիրը յեկավ, Աբ-
դուլի աշառը չկար. Աբդուլն են սհաթը դագանակն
առավ, գնաց. ուր չեղավ Աբդուլն են զիշեր, ուր
չդնաց, ուր չպտտեց, Ալգեթի ու Խրամի ափերը
ման յեկավ, Զանդարի չորս կողմը ման յեկավ,
Մարնեուլն ել բարձրացավ, Սահկալթութանի
սարերին ել մոտեցավ, ամա աշառը չգտավ. սադ
գիշերն անձրեի տակ մնաց, շատ թրջվեց. սաբախ-
տան տուն դարձավ. դուռն «անան»—մայրիկը
բացեց, ֆաթման ել զարթուն եր, չեր քնել:

Հարցրեք Աբդուլի «անային» ու «արգա-
դին», մորն ու կնոջը, յերկուսն ել եստեղ են,
այ, ենտեղ պուճախի մոտ նստած, նրանք դուզ
կասեն, ամա ճիշտ, չունքի վալլահ, եյ բոխ, դեռ
նրանց բերանը սուտ չասավ:

Մեկել որը միլիցիան յեկավ ու դուստաղ ա-
րեց,—ամա վալլահ, մանմ սուզում յոխտի,—աստ-
ված վկա, մեղք չունեմ, աստված վկա, Աբդուլը
բան չգիտի, եյ բոխ, նետ, եյ բոխ, նետ, մայա նետ:

Աբդուլն ասելիքն ասաց ու լոեց:

— Աբդուլ, վկա ունե՞ս:

— Զե, Աբդուլը վկա չունի, են զիշեր մե-
նակ եր թափառում սար ու ձոր, յա ինչ պետք
ես վկա, Աբդուլ հազար անգամ յերդում կերավ,
կուզեք զուրանի վրա ել յերդում ուտի, կանչեք
մոլլին, բերեք զուրան:

Աբդուլ ստի վրա յերդում չուտես, Աբդուլ
պատվական մարդ ա, հարցրեք ում վոր կուզեք:

Սարվանի մոլլային, եստեղի մեծին, թեկուզ
բորչալվեցի ամեն մի թուրքի, բոլորն ել կասեն,
վոր Աբդուլ պատվական մարդ ա:

— Կանչեցեք վկային, ասաց դատավորը և
մի անգամ ել նայեց հաղթանդամ թուրքին, վոր
գոմեշի աչքերի նման աչքեր եր փայլեցնում,
մերկանդամ կը ճքին դարձյալ բուռնցըներ զար-
կում ու յերեք լեզվով բարձրածայն կանչում.

— Զե, աստված վկա, վալլահ, մանիմ սու-
զում յոխտի, վողջ դալիճը մի հայացքով զննեց
և յերբ քարացած ժողովրդի մեջ վոչ մի կարեկ-
ցություն չգտավ, հուսահատ ընկավ բազկաթոռի
վրա, յերկար ձեռքերով սկսեց ծնկները ծեծել
ու խոնարհաբար աղերսել:

— Ալլահ, ալլահ, սուզա դյուշտուն, սույա
դյուշտուն, թեկուզ դատն ընկնես, թեկուզ ջուրը
— մեկ ես:

Մալականներն Աբդուլ Քյարիմին մատնա-
ցույց եցին անում և համոզված ասում.

— Սա յե, իսկը, սա յե, շատ լավ ենք հի-
շում:

— Լավ նայեցեք, չսիալվեք, իզուր մար-
դու մեղքի տակ չընկնեք, խզճի դեմ չզնաք,—
դատավորը մի քանի անգամ ասաց մալականնե-
րին:

— Սա յե, իսկը սա յե,—դարձյալ համա-
ռում եցին մալականները, այս չիթն ել մերն ե,
այս յերեսսրբիչն ել, գլխարկն ել:

— Եյ բոխ, նետ, եյ բոխ—ճակատ առ ճա-

կատ ասում եր Աբգուլը մալականներին։ Սակայն վկաները դարձյալ առաջվացուցմունքներն ելին պնդում։

Մեղադրողի ու դատապաշտպանի յերկար վիճաբանությունից հետո՝ վերջին խոսքն Աբգուլին տվին։

Թուրքը սրանից ավելի վոչինչ չասաց։

— Աստված վկա, չե, վալլահ, մանիմ սուզում յոխտի, ել բոխ, նետ, ել բոխ, —մի անգամ ել ճշաց Աբգուլը և կուրծքն ուժին ծեծելով նստեց։

Դատավորներն առանձնասենյակ գնացին։

Զովքն ու ֆաթման մոտեցան Աբգուլին և ականջին փսխսացին։ Զովքի մեջքին կապույտ բոխչա կար կապած։ Բոխչի միջից Աբգուլի միտարեկան տղայի՝ Վալու ու աշքերն ելին յերեռում։ Յերեխան կապիկի պես ծրմովում ու գեպի հայրն եր թուչում, կարծես ուզում եր դուրս պրծնել։

Աբգուլը Վալուն կատվի ձագի պես գիրկն առավ, մի տասն անգամ համբուրեց, խաղացրեց, կրծքին սեղմեց ու հետո ֆաթմային դարձավ։ Զովքը, ֆաթման և Աբգուլը յերկար խոսեցին, իրար ժպտացին, շոյեցին, հույս տվին ու ամրապնդվեցին։

— Ղոչաղ ոլուն, ղոչաղ, ղորխմայուն, բուզուն չիխարմ (ղոչաղ յեղեք, չվախենաք, հենց այսոր դուրս կգամ)։ Աբգուլը վերջին խոսքն ասելով, վոտքի կանգնեց։

Դատավորները ներս յեկան։ Նախագահը յերկար ժամանակ կարգում եր դատավճիռը, վորի վերջին բառերն այս ելին։

— ... Յեկ Աբգուլ Քյարիմ ողլին դատապարտվում և 10 տարվա բանտարկության։

Դատավորները դուրս գնացին։ Աբգուլն ապշած նայեց գնացող դատավորների հետեկից, յետ դարձավ, նայեց ժողովրդին, նուսահատ ժըպտաց և զայրացած ձայնով վնթինթաց։

— Ալլահ, բու նա խաբար դի, բու նա խաբար դի. ալլահ, այս բնչ ե։ Զովքը ձեռքերով գլուխը բռնելով՝ գոռաց, ֆաթման գոռալով դեպի ամուսինը վազեց։ Վալին դահլիճով մեկ ճշաց, իսկ Աբգուլն աչքերը չռած՝ նայում եր դեպի այն կողմը, վորտեղից գնում ելին դատավորները։ Յերբ դատավորներին չգտավ, պահակներին դարձավ, սկսեց բռունցքներով կուրծքը ծեծել դառնագին ու գոչել։

— Վալլահ, բիլմիրամ (աստված վկա, չգիտեմ)...

Եյ բոխ մայա նետ, ել բո՛խ... եյ բո՛խ։ Պահակի ուղեկցությամբ Աբգուլը փողոցի մեջտեղով անցնում եր, ձեռքերը լայնությամբ ազատ շարժելով մրմնջում եր։ — Ալլահ, բու նա խաբար դի, բու նա խաբար դի...

Ֆաթման ու Զովքն արտասվելով հետևում ելին ու միիթարում։ Յերբ Որթաճալի բանտին ժողոցան, Աբգուլը հանկարծակի շուռ յեկավ,

մորը, ամուսնուն և յերեխին ամուր սեղմեց իր
լայն կրծքին ու արտասվեց:

Բորչալվեցի թուրքի լեզուն կապվեց, շրթունք-
ները դողացին, վիզը ծռվեց, գլուխը մոր ու ա-
մուսնու ուսերին զցեց և իր յերեխի պես լաց
յեղավ. կանայք ել փաթաթվեցին և ուժեղ ճիչ
արձակեցին: Շվարած պահակները բանտարկյա-
լին հազիվ խլեցին կանանց ձեռքերից ու բացված
յերկաթե դարպասից զցեցին ներս: Առաջին
անգամ պատահեց Արդուլին կանացի այսպիսի
հիվանդություն, առաջին անգամ լաց յեղավ, ա-
ռաջին անգամ ցույց տվեց մարդկանց իր ար-
ցունքները: Արդուլը կտրիճ աղամարդ եր, իս-
կական քաջ տղամարդ: Յեթե մեկն ու մեկն ի-
մանար Արդուլի կանացի լացը, վողջ Բորչալվի
մեջ անունը կկոտրվեր և բանտում ել կնամար-
դի անուն կստանար: Արդուլը լավ գիտեր՝ բան-
տում քաջ տղամարդի անուն ունենալն ավելի
լավ գին ուներ, քան Բորչալվի մեջ, գրա հա-
մար ինքն իրեն զսպեց, շտապ աչքերը սրբեց և
ակամա ինքն իրեն սիրտ տվեց: Յերբ մեծ բա-
կը մտավ, այս և այն կողմից դժվարոց լսեց.
— Արդուլ խոշ գյալդի... Արդուլ, ինչպէս ազատ-
վեցար: Արդուլի ու բեխերի միջից սպիտակ
բյուրեղյա ատամները փայլեցին և տանջված
գեմքով թախիծի ժպիաներ սահեցին: Արդուլը
ձեռքերը բարձրացրեց, տաս մատը ցցելով զայ-

բացած գոռաց.—Ո՞ն իլ... տաս տարի, ասս...

Ղժժոցն անմիջապես դադարեց ու հինգ
հարկանի շենքը մի վայրկյանում մնշեց: Արդու-
լին բոլորն ել ճանաչում ելին և վոչ մեկն ել
չեր սպասում 10 տարվա դատավճիռ, այն որ-
վանից, յերբ մեջքապինդ թուրքն այս շենքի
մեծության բեռը շալակեց: Գլխիկոր Արդուլը
բակի ամբոխը ճեղքեց, հինգերորդ հարկը բար-
ձրացավ ու պատուհանի յերկաթե ճաղերից բըռ-
նելով սկսեց նայել: Այնտեղից պարզ յերկում
ելին՝ նավթլուղը, Սանգորի ընդարձակ դաշտը,
Սողանլվի շրջակալքը, Շավինաբաթի կատարը,
Միրզոյեվի նախկին այգին ու դղյակը: Որթա-
ճալի բաղ ու բաղչաները, Քուոր, Յերկաթե կա-
մուրջը և Բորչալվի ճանապարհը, վոր բանտի
կողքով անցնում եր և Շավինաբաթի սարի տակ
անհետանում: Այն ճանապարով պիտի անցնելին
Զովըն ու Ֆաթման, վորոնք սայլով պետք ե
գնային Սարգան: Արդուլը յերկաթե պատուհա-
նի ճաղերից պինդ բռնեց ու քարացավ: Բորչա-
լու գնացող մի քանի սայլեր անցան, Արդուլի
սայլն ել յերկաց: Բանտարկյալը ճանաչեց իր
կարմիր յեղները, բարձրահասակ ծառա Աղի
Ղուրբանին ու սղավոր մորն ու ամուսնուն:
Սայլը բանտին զուգահեռ, մոտեցավ: Զովըն ու
ու ֆաթման նայում են... Արդուլին են փընտ-
ուում, բայց չեն գտնում: Նա ավելի բարձրացավ

պատուհանին, անցքից ձեռքը մեկնեց, գունավոր թաշկինակ թափ տվեց և ուժեղ ծայնով կանչեց.—այ, աննա-ա-ա... Ֆաթմա-ա-ա... Ֆաթմա...

Կանայք սայլում բարձրանալով, ճշացին.—Աբդուլ նւլնւ, Աբդուլ նւլ նւ:

— Սալամա-աթ, սալամա-աթ, մնա բարով մնա բարով, հուսահատ կանչում եր բանտարկյալը:

— Սալամաթ, Աբդուլ, սալամաթ,—լսվում է խեղդված պատասխանը: Դրսից պահակը գոռում ե, բայց Աբդուլը վոչինչ չի լսում, դարձյալ թաշկինակ և թափ տալիս, ճաղերը շարժում ու հեռում.—Սալամաթ, Աննա, սալամաթ, Ֆաթմա, սալամանաթ: Քսան քայլի վրա դուրս թռավ գնդակը, պատի փոշին Աբդուլի յերեսին թափեց:

Թուրքը յերկու ձեռքով շարժում եր յերկաթե ձողերը և զայրացած գոռում եր պահակին:

Եյ դու քյոփակողի դոնդուղ, վնար, գենա վուր, գենա.—շանգորդի շնուն, խնդ, կրակիր, նորից կրակիր...

Բանտարկյաներն Աբդուլին բռնեցին, ճաղերից ուժով պոկեցին ու պատուհանից ճաղիվ իշեցրին: Աբդուլն ավելի զայրացավ, զազան կտրեց, առյուծի պես կռվում եր, վիրավոր վագրի պես վոռնում, վողջ մարմնով դողում ու

գոռում, բանտարկյաներին յերեխաների պես դես ու դեն շպրտում, արջի պես մազլցում դեպի պատուհանն ու պահակին կանչում:

— Վուր, վու-նւր, պահակ, կրակիր Աբդուլի վրա, մի անգամ ել կրակիր և սպանիր խեղճ թուրքին...

Ինչու յես լոել, ինչու յես ապշած նայում դժբախտ Աբդուլին, ինչու յես բացել բերանդ, կրակիր, կրակիր, վերջ տուր տանջված Աբդուլին:

— Աննա ա, Ֆաթմա ա ա, Ֆաթմա ա ա...

Աբտակից բանտարկյաներ, յեղբայրներ ու դարդաշներ, ձեզ ի՞նչ պատահեց, ձեզ ի՞նչ պատահեց, ի՞նչ եք ուզում ձեր յուղաշից, ի՞նչու յեք բռնում, ի՞նչու յեք կռվում, բաց թողեք Աբդուլին, բաց. պահակին պիտի զոհվի, Աբդուլը մեռած կյանք չի ուզում, այն ել չորս պատերի մեջ, առանց մոր, առանց ամուսնու, առանց յերեխի, տասը տարի, տասը անվերջ ու սրտամաշ տարի: Ի՞նչ անի թուրքի ընտանիքը, ով կպահի նրա տավարը, ով կվարի Աբդուլի արտերը, «ով քոմագ» կինի Աբդուլի ընտանիքին, քանդվեց Աբդուլի տունը, կմարի Աբդուլի ոճախը, կվերջանա «դուլբաթն ու մալը, կործանվեց Աբդուլ Քյարիմը, սեացավ նրա յերիտասարդությունն ու վերջացավ նրա կյանքը: Աբդուլը նորից թռավ պատուհանն ու նա-

յեց ճանապարհին, սայյն այլես չեր յերեռւմ.
ուժասպառ մարդինը հաղիվ քաշ տվեց բան-
տարկյալը, ընկավ թախտի վրա ու ճարպոտ
գունափոք թաշկինակով յերեսը ծածկեց:

Որը-որին եր փոխարինում, շաբաթը՝ շաբա-
թին, Արդուլի ապագայի պես յերկար, թախ-
ծալի: Արդուլն իր դարդն աշխատանքի մեջ եր
սպառում: Վաղ առավոտից մինչև ուշ յերեկո
աշխատում ե, փայտ ջարդում, միս ծեծում և
պղնձեղեն սրբում, յերեկոյան շուտ անկողին ե
մտնում, բայց մինչև կես գիշեր չի քնում, խոր
տնքոցներով հառաջում ե, ծանր շնչում, ան-
հանգիստ շուռ գալիս ու մերթ քնի մեջ տարո-
րինակ ճչում: Խոսելու մեջ ժլատ գարձավ Ար-
դուլը և կարծես թե միջացավ: Միայն Շաքրո-
յին ե հավատում Արդուլը: Շաքրոն հին բան-
տարկյալ եր, բանտում եր ծնվել, բանտում եր
մեծացել:

Շաքրոն Արդուլի «զարդաշն» ե, հերոս ե,
զոչի յե, իսկական փաշա, փանկան ե: Բան-
տարկյալներն «աղայի նոքարներ» աղա Շաք-
րոյին են ծառայում, հարկ են տալիս ու ճա-
կատին նայում: Արդուլն ու Շաքրոն վաղուց
ընկերացել են, հաճախ առանձնանում են ու
թախտերից մեկին նստում ու յերկար-յերկար
զրուցում:

— Միբաս շատ ե ցավում, Շաքրոն յեղբայր

գանգատվեց Արդուլը, աստված վկա, Արդուլն
անմեղ ե, վալլահ, արդար ե. Շաքրոն հավա-
տում ե «զարդաշ»-ի անմեղության, զգում ե
«յոլդաշ»-ի տաշանքը և բանտարկյալին միի-
թարելով սիրտ ե տալիս ու առաջիկա ազատու-
թյամբ հուսադրում:

Զրույցն ու միիթարանքը մեղմիկ բարա-
թով վերջացան:

— Այ բալամ, բալամ ա...
Ազիզիմ, վայ դարդիմ,
վայ դարման իմ, վայ դարդի-ի-իմ,
ելլար վայ ահքափ գյուլ դարդի:

Ման գյուլ աքտիմ վայ դարդ-իմ... վայ
դարդ-իմ... (սիրուն յարս, ախ քաշեցի, վայ իմ
հույս, ախ դարդ իմ, ուրիշները դարդ ցանեցին,
վարդ քաղեցին, իսկ յես՝ վարդ ցանեցի, դարդ
քաղեցի:):

Արդուլի յերպը հնչում եր լալագին, հա-
ռաչում ու հուսաբեկ սգում: Արդուլի յերպը
հառաչանքով ե սկսվում, լացով վերջանում:
Հանկարծ լուսմ ե, ճարպոտ թաթով գաղտագո-
ղի աչքերն ե ծածկում և այրված մրմնջում:

— Գիտեմ՝ ով դժբախտացրեց Արդուլի ըն-
տանիքը, Արդուլը գիտե, գիտե, բայց...

Բայց Արդուլը լուսմ ե, ազգականներին
մատնելն ամոթ ե. այդ ել չլինի՝ Արդուլը վոչ
մի փաստ չունի, ուրիշի հանցանքը չի կարող

հաստատել և իզուր ամոթով կլինի. դրա համար լուռ և Աբգուլը, սրտում կուտակված դարդը խեղղում եւ ու ճակատագրին սպասում: Աբգուլը հավատում եր ճակատագրին ու նրա արդար գատաստանին: Աստծուն այլևս չի հավատում: Աբգուլը, նախքան տասը տարվա կդատապարտելին, որական հինգ անգամ կարպետ եր փոռւմ, յերեսը Մեքքայի կողմն եր դարձնում և աղոթքներ մրժնջում: Իսկ այժմ ալլահն ու Աբգուլը խոռվել են իրարից: Ինչու ալլահը չոգնեց Աբգուլին, ինչու ցույց չտվեց իր ուժն ու արդարությունը, ինչ եր ուզում ալլահը խեղճ ու անվնաս Աբգուլից, ինչ աններելի մեղք գործեց սարվանեցի թուրքը, վոր այսպես սաստիկ պատժվեց. վոչ, յերկնքում ալլահ չի յեղել և վոչ ել նա զորություն և ունեցել այս յերկրի վրա:

Յերբ Աբգուլը դարդերն եր մտարերում ու Շաքրոյին գանգատվում, սպառնալից կարում եր իր հառաջանքները, կուրծքը փուքսի պես ուռչում եր, բռունցքներով սկսում եր կուրծքը ծեծել, ճարպոտ մատը դեպի Բորչալու յեր մեկնում և սկսում արջի պես մրթմրթալ:

Դուրումսաղ Մուստաֆա, դաշաղ Մուստաֆա, սպասիր մի դադար տուր Աբգուլին, Աբգուլը քո ընտանիքի արյունը պիտի խմի և քո մինը չներին կեր անի:

Դոնդուզ...իթ... քյոփակողի... ✓

Յերբ Աբգուլին սև թախիծը պատում ե, բանտարկյալները զգուշաբար անցնում են նրա մոտով և մինչև անգամ խոսելուց խուսափում են. բայց բոլորը չեն իմանում Աբգուլի բնավորությունը. պատահում ե՝ մեկն ու մեկն այն ժամանակ Աբգուլի ոճիքն ե բռնում, պոկ չի գալիս, զահեն տանում ե: Աբգուլը զայրույթից խուսափում ե, կամաց մրմռում, սրտում զայրույթի գետեր լճացնում, բայց մի քանի անգամ անկախ իր կամքից լճացած զայրույթը թնդանոթի ոռումբի պես պայթում ե, ու անգորը ու անխոս Աբգուլին վոչ վոք չի կարող պահել այլևս. հանկարծ վոռնոց, ձիչ և պայթում ու բորչալվեցի թուրքն առյուծի պես վեր ե թռչում: Լսվում ե զարհուրելի թրխկոց, ջարդ ու փշրելու ձայն և Աբգուլի գոռոցը.

— Դոնդուզ, քյոփակողի...

Զարվգում են թախտ, աթոռ, ամանեղեն, ծեծվող բանտարկյալի ատամներ ու կողեր: Բանտարկյալները մեղուների պես թափվում են Աբգուլի վրա, աշխատում են խլել զոհին: Աբգուլն այլևս յերկրում չե, վոչ մեկին չի տեսնում, վոչ բանտարկյալների դժմոցն ե լուսմ վոչ ել մարմնի կծոց ու ցավեր զգում, Աբգուլն ծաքրոն գիտե Աբգուլին հանգստացնելու անրը, Հազիվ մոտենում ե և ականջին ասում:

— Աբգուլ Խօսկան գրադարձուլ յեթար:



Արդուլը Շաքըոյի ձայնը լսելուն պես յերկաթե ճիրանները բաց ե անում, մերձիմահ և արյունլվա զոհին ազատում:

Արդուլն առանց ուտել խմելու, սոված ե մնում, միայն թե պատուհանի մոտ նստի ու դուրս նայի: Այնտեղից հսկայական յերկինքն ե յերեւմ: Նավթլուղից մեկնած գնացքն ոճապըտույտ սլանում ե, արդյոք ուր ե սլանում գնացքը, Բագմ թե Բորչալու: Գնացքը մերթ աջ ե թեքվում, մերթ ձախ կամուրջն անցնում, Շավսաբաթի լեռան մոտ ծածկվում ու Արդուլի տիրանեղձ ու հրդեհված հոգին հետը տանում: Յերկու ժամից հետո ագեթը ճեղքում և Սարվանի կողքով անցնում: Յերանի Զովըն ու Ֆաթման տեսնեյին յերկաթե «Հեյթան»-ին և ընդունեյին Արդուլի շերմագին բարեները, վոր այդ գնացքին եր հանձնել:

Յերանի Արդուլը գնացքներից մեկին կախընկնի, Զանդարն անցնելուն պես արագընթաց գնացքից կթոշի Սարվան, վազեվազ կմտնի, ամուսնուն ու յերխային այնպես ջերմագին կը-դրկի, ինչպես յերկաթե այս ձողերը, վոր այս բոպեյիս այնպես են սեղմում, կարծես բանտից գնացող գնացքին թուշելիս լինին:

Ալլահ, ալլահ, միայն պարսպի այն կողմն անցըռու՝ Արդուլը Սարվան գնալու ուրիշ ճանապարհ ել կգտնի, այն ճանապարհը, վոր դեպի

Սարվան ե զնում, ահա մարնուցոց սայլերը... այ, ջանդաբեցի թուրքեր ու մարաբդացի վրացիներ...

Ճանաչում ե Արդուլը, ճանաչում բոլորին: Արդուլի ինչին են պետք սայլերն ու խճուղին:

Արդուլը Շավսաբաթի կատարով կանցնի, վոր բանտից հարյուր քայլ հեռավորության վրա յե սկսվում, Կումիսի լճիմուով կանցնի ու այնտեղից ուղիղ Սարվան կմտնի...

Այստեղ ներքեւում, մոտիկ բանջարանոցում յերեք մարդ ե աշխատում, գործարանի դռան մոտ մի յերիտասարդ և մի որիորդ անուշ խոսսում են. ճանապարհի մեջտեղով յերեխա յե վազում, հետեւիցն ել մի շուն. Սողանլուղի կողմը հինգ ագռավ ե թուչում: Ինչ յերջանիկ են նրանք, յերանի ձեզ, բանջարանոցի մշակներ, յերիտասարդ, որիորդ, յերեխա, վոր ազատ եք, ձեզ ել յերանի, ձեզ ել յերանի Բորչալու գնացող սայլապաններ, դուք այս գիշեր ձեր ընտանիքում կլինեք ու ձեր կանանց ու յերեխաներին նվերներ կտանեք, Յերանի ձեզ, անպոչ շնիկ ու սև ագռավներ, դուք Արդուլից ել բախտավոր եք, հարյուր անգամ բախտավոր, հազար անգամ յերջանիկ, քանի վոր ձեր վոաքերը, ձեռքերն ու թևերը կաշկանդված չեն ու ազատ կարող եք ամեն կողմ թուչել ու վազել՝ թեկուղ հառաչել, ճչալ, հաջել կամ գլխիվար ընկնել:

Իսկ Արդուլը... Արդուլը սրտով բայաթի
ասելու իրավունք չունի։ Մրտաքեկ թուրքն
այնպես կամաց զառանցում ու հառաջում եր,
վոր իր սրտի հեծկլտանքները միտյն ինքն եր
լում։

— Այ բալամ, բալա-ա-ամ...

Ելար վայաճքափ գյուլ դարդի,
Մանգյուլ ահքտիմ վայ դարդի-ի-իմ...

Որ չի անցնի, վոր հարյուրավոր բանտար-
կյաների բարեկամներ ու ծանոթներ չգան-
տեսնելու ու հազար տեսակ համեղ կերակուր-
ներ շբերեն։ Միայն Արդուլին մոռացել են՝ թե
աստված, թե բարեկամները և թե ընկերները։
Այդ պատճառով Արդուլն անդարմանելի դարդով
ե տանջվում, բայց վոչ մեկի վրա նեղացած չե,
վորովհետև գիտե, վոչ Բորչալուն ե մոտիկ և
վոչ ել բորչալվեցիք են պարապ, վոր Արդուլի
տեսության համար յերեք-չորս որ կորցնեն։

Արդուլի «անան ու արվագը»—Զովին ու
ֆաթման յերեք չորս ամիսը մի անգամ դալիս
են Արդուլին տեսության։ Յերբ տեսության որն
ե լինում, տեսակցելու տեղ յերկաթե ձողերի
այս ու այն կողմ խառնված են լինում անթիվ
բանտարկյաներ ու նբանց ազգականները, այն-
պիսի վժժոցի ձայն ե լսվում, վոր վոչինչ չի
հասկացվում։ Յերբ Արդուլը Զովին ու ֆաթմա-
նին տեսնում ե, յերկաթե ձողերն այնպես ե

հրում ու գոռում, վոր քիչ ե մնում՝ յերկաթե
ձողերը խորածակվեն, ուզում ե իրենց խոսակ-
ցությունը միայն լսելի լինի։ Արդուլը հազիվ
պոկ ե գալիս յերկաթե ձողերից վերադառնալով
բանտի սենյակը՝ բերած ուտելիքը Շաքրոյին ե
բաժանում ու սկսում ե սովորական մրմռոցը։
— Իմ կապույտ նժույզս ծախել են...

Կամ թե չե՝

Յերկու կովս սատկել ե...
Սնան շատ հիվանդ ե յեղել...
Ընտանիքս ձեռքես գնաց... .

Անցավ մի տարի։ Հոկտեմբեր ամսին Ար-
դուլին կանչեցին, հազար ու մի հարց ու փոր-
ձից հետո հայտնեցին։ Արդուլի բանտարկության
ժամանակը մի տարով կրճատեցին, վեց տարի
ելի մնաց Արդուլին, միայն վեց, վեց անգամ
ձմեռ պիտի զա ու վեց անգամ ել զարուն, հե-
տո... հետո Արդուլն այ, այն ճանապարհով կգնա,
Սարվան կհասնի, Մուստափի մոտ կգնա ու...

Ի՞նչ կասի Արդուլը Մուստափին, այն բո-
լորի փոխարեն ի՞նչով պիտի հատուցանի, վոչ-
վոչ, Արդուլը վոչ վոքի ասելու չե, վոչ վոքի,
բացի Շաքրոյից, իր յեղըոր դարդաշից, թող
Մուստափան գեռ ապրի ու ման գա...

Վեց տարին այնքան շատ չե, վոր Արդուլը
չկարողանա դիմանալ, վոչինչ, «սպասի, թող
սպասի Մուստափան» :

Նորից անցավ յերկար ու սրտամաշ մի տարի, նորից հոկտեմբեր ամսին կանչեցին Արդուլին ու հայտնեցին՝ «Արդուլին ելի յերեք տարի բաշխեցին», հիմա յերկու տարի մնաց Արդուլին, միայն յերկու տարի, ալլահ, դու ոգնի՞ր Արդուլիյարիմ ողլուն:

Ուղիղ վեց ամիս և անցել, վոր Արդուլը Զովրին ու Ֆաթմային չի տեսել և յուր չի ստացել. Նորից յերջանիկ որը հասավ:

Արդուլին տեսության կանչեցին:

— Ֆաթմա՛, Ֆաթմա՛, զուրբան ոլըմ սանա, նեջա սան,— մատաղ քեզ, մատաղ, ի՞նչպես ես: Ֆաթմա, ինչու մենակ յեկար, վո՞րտեղ և Զովրը, ինչու Արդուլի «անան» չեկավ, հը՞, ի՞նչ ե, շատ և հիվանդ, չե՞ լինդրում եմ, Ֆաթմա, Արդուլից վոչինչ մի ծածկիր, ճի՛շտ ասա, ճի՛շտ, Զովրը... Ալլահ, ալլահ, Զովրը մեռափ, չե՞, յե՞րբ, ի՞նչպես, ճիշտ ե. յերբ Զովրը հոգին ավանդում եր ալլահին, Արդուլին եր հիշում, չե՞: Ալլահ, դու ոգնի՞ր Արդուլին ու նրա քանդված ընտանիքին: Թող դիմանամ յերկու տարի, միայն յերկու տարի, հետո Արդուլն ինքը զիտե: Արդուլն ինքը կպահի Ֆաթմային, Վալուն ու հատուցանի թե բարեկամին և թե թշնամուն:

— Ֆաթմա, զուրբան ոլըմ սանա, Ֆաթմա, դու յել համբերի՞ր յերկու տարի, միայն յերկու տարի, համբերի՞ր ու հավատարիմ պահիր քո Արդուլի կնոջ նամուսը:

Ալի Ղուրբանը կոգնի քեզ, ծախիր, ինչ վոր ծախելու ունես, միայն Արդուլի ոջախը մի մարդիր, աշխարհի մեջ չխայտառակես, Արդուլն առանց քեզ կյանք չի ուղում: Ֆաթմա, տանը մինակ մի՛ մնա, Ալի Ղուրբան ողլին տղամարդ ե... Արդուլը հավատում ե քեզ, բայց զյուղը բամբասաներ ե. Արդուլի մորաքրոջը քեզ մոտ բեր: Ի՞նչ ասիր, արդեն բերել ես, միասին եք ապրում, զոչաղ, զուրբան ոլըմ սանա Ֆաթմա, զուրբան: Գնալու ժամանակ ել մոտացավ: Մի քիչ ել թնդ պահակ, մի քիչ ել, մի քիչ թող վորբացած Արդուլին, դեռ խոսակցությունը չի վերջացել, դեռ շատ բան ունի ասելու, խրատելու:

Սպասիր, պահակ, ասում եմ՝ սպասիր. Ֆաթմա, զուրբան ոլըմ սանա, զուրբան, Վալի սալամաթ-սալամա—մթ:

Միթե Արդուլի ոջախի մայր սյունը դուրս պրծավ, միթե նրա ոճախի լույսը մարեց, միթե իսկապես քանդվում ե Արդուլի բունը: Թեև Ֆաթման զոչաղ ե, բայց գարձյալ կին ե, այս աշխարհում նախանձոտ մարդիկ շատ կան, անտերությունից կոգավեն ու Արդուլի ունեցած շունեցածը կթալանին: Զե՞ վոր Ֆաթման ալսոր ասաց, — նորից տասը վոչիար ու մի աչառ ե կորել: Ել ինչ մնաց Արդուլին — մի գոմեշ, յերկու գոմշածագ, մի կոփ, յերեք աչառ ու մի եշ:

Բանտարկյալի ընտանիքում ամբախտությունը բուն դրեց ու դժվար է նրան այնտեղից հանել. յեթե ինքը՝ Աբգուլն անձամբ չըփոնդի նրան...

Ժամանակը կրիայի քայլերով եր անցնում: Բանտի շրջակալքը նորից ձյունով ծածկվեց ու նորից կանաչեց:

Առաջ Աբգուլը ֆաթմայից յերկու ամիսը մի անգամ նամակ եր ստանում. իսկ յերեք չորս ամիսը մի անգամ ել ինքն եր գալիս. Այժմ վեց ամիս ել անցավ ու դեռ ավելի, բայց վոչ նամակ կար և վոչ ել՝ ֆաթման:

Ինչ պատահեց քեզ «զզի» աղջիկ. դու ել Զովրի հետ խոմ չես գնացել, յերեի հիվանդ ես կամ մեկն ու մեկը փախցրեց քեզ, ինչու յես լոել և ինչու յես չարչարում քո լոռւթյամբ Աբգուլին:

Մոլլան ել չի պատասխանում ու վոչ ել Աբգուլի հորեղբոր վորդին՝ Սոհուն:

Դարձյալ մի անգամ ել կանչեցին Աբգուլին ու նորից հայտնեցին, վոր մի տարի յել են բաշխել:

Շաքրն քեզ մատաղ, ոգնիր Աբգուլին: Քեզ մատաղ, Շաքրն յեղբայր, լավ հիշիր՝ յերբ դուրս կտա այստեղից քո ղարդաշ Աբգուլ Քյարիմ ողմին: Հինգ ամսից հետո. իշխանություն չոխ սաղ ոլ, շատ շնորհակալ եմ, շատ, Շաքրո յեղ-

բայր, մի նամակ զրիր Զանդար կայարանի պահակ Միխա կիկիլաշվիլու անունով՝ Ֆաթմային հանձնելու: Քանի վոր Սարվան մոլլան աբգուլին չի պատասխանում: Միխանը կգնա ֆաթմայի մոտ, կկարդա նամակն ու պատասխանը կգրի: Միխան Աբգուլի «զոնաղն» ե, նրա «ընկերը», լավ «յոլդաշը», դե նստիր ու այսպես գրիր.—«Ֆաթմա ջան, իմ ֆաթմա, վեց ամիս անցավ քո նամակը չստացա, վոչ ել դու յեկար: Ֆաթմա, հիվանդացմբ, թե՞ քո Աբգուլին մոռացնոր: Յերկու նամակ եմ ուղարկել, բայց պատասխան չկա. իմ արվադ—իմ կին, չգիտեմ լաց լինեմ, թե ծիծաղեմ. յերբ հիշում եմ քեզ՝ աշքերս արցունքով են լցվում, դարդը շատ ե տանջում, գուցե Աբգուլին մոռացար, կարելի յե՝ ուրիշ քեշի—ուրիշ ամուսին ճարեցիր: Հիմա ծիծաղել եմ ուզում, վորովհետև շատ եմ ուրախ, հինգ ամիս մնաց, հետո Սարվան կզամ ու նորից ազատ կյանքով կապրեմ, դու ել ուրախացիր ու ժամա, սիրաս ինչ վոր վատ բան ե ասում, ինչու քեզանից խարար—լուր չունեմ, ինչու մոռացար, ինչպես ե իմ վալին, իմ տափարն ու ոջախը: Ֆաթմա, իմ ֆաթմա, այս նամակը վոր ստանաս, անմիջապես արի քաղաք, մի քիչ ել փող քեր՝ յեթե դալ չկարողանաս, մի քաղաք—վորքիկ—նամակ ուղարկիր, թե չե Աբգուլը դարդից չի քնի: Յեթե յերկու

շաբաթվա մեջ չեկար կամ նամակ չուղարկեցիր,
քո Աբգուլը դարդից կմեռնի:

Ֆաթմա, Աբգուլի փոխարեն հարյուր ան-
գամ համբուրիր բարաջ-փոքրիկ վալուն: Սալա-
մաթ ոլ ֆաթմա, մնաս բարով, ֆաթմա, մնաս
բարի:

Քո քիշի-ամուսին—Աբգուլ-Քյարիմ ողի»:

Դանդաղ ու սրտամաշ յերկու շաբաթ ան-
ցավ, յերկու շաբաթն ել հուզված Աբգուլը վոչ
նստել եւ կ վոչ ել պառկել իր անկողնում, շվա-
րած թուրքը ջղայնացած այս ու այն կողմն եր
շընում, հաճախ ձեռքերը դեպի յերեսը տանում,
ինքն իրեն հարցնում:

—Ալլահ, բու նա խաբար դի, բու նա ալա-
մաթ դի, Շաքրոյի վոչ մխիթարանքը և վոչ ել
ընկերական ժապան եր ազգում Աբգուլի վրա:

Աբգուլ տիրեց, ընկճվեց ու մութ գիշեր-
վա պես մթնեց:

Շաքրոյի բանտարկության ժամանակն ան-
ցավ:

—Մնաս բարով, Աբգուլ յեղբայր, մնաս
բարով:

—Սալամաթ, Շաքրոյի յեղբայր, սալամաթ քո
յոլդաշ ու դարդաշ Աբգուլին չմոռանաս:

Շաքրոյն Աբգուլին իր բնակարանի հասցեն
ավեց, նույս ներշնչեց, անկեղծ ընկերական ջերմ
սիրով գրկեց ու գնաց. «Սալամաթ, Շաքր յեղ-
բայր, սալամաթ»:

Մի քանի որից հետո Աբգուլը բանտապե-
տին խնդրեց.—

—Յես ել եմ ուզրւմ Ավջալա գնալ:

Աբգուլին ելի չըրս ամիս եր մնում. մի քա-
նի որից հետո Աբգուլին ուղարկեցին Վերին
Ավջալա՝ աշխատելու:

Աբգուլը համարյա թե ազատ ե, աշխատում ե,
ազատ ման գալիս ու ամեն ինչ տեսնում: Աշ-
խատող բանվորներին միայն յերեկոյան են համ-
բում, փայտյա շինության մեջ բանտարկում ու
առավոտյան նորից աշխատանքի ուղարկում: Մի
յերեկո, բանտարկյաներին համբելու ժամանակ,
յերբ Աբգուլ-Քյարիմի անունը կարդացին, նրա
սովորական պատասխանը՝ «զդես»—չլսվեց: Դես
ու դեն նայեցին, հարց ու փորձ արին, փնտոե-
ցին ու վերջը յերբ չգտան, զարմացան:

Աբգուլը փախտվ, Աբգուլը, այն ել այնպի-
սի պատվական բանտարկյալ, են ել ի՞նչ ժամա-
նակ: Յերեք տարի նստեց, յերեք ամսվա հա-
մար փախտվ: Նորից հարց ու փորձ արին, փըն-
տոեցին ու յերբ չգտան, արձանագրություն
կազմեցին և հանգստացան:

Կես զիշերն անց եր, յերբ գնացքը Սան-
դար կայարանին մոտեցավ. սլացող գնացքից
զլուխը ծածկած Աբգուլը դուրս թռավ ու մթու-
թյան մեջ անհետացավ: Մի ժամ անց՝ Աբգուլի-
ուրվականը Սարվան գյուղում յերեվաց:

Աձի պես ե սողում ու թռչում Արդուլը.—
այ, նրա հորեղբոր վորդու՝ Մուստաֆի տունը:
«Ախ, հարամ զադա ախ զաշաղ Մուստաֆա»,
ԱՇ Սոհունի հողե տնակը, տհա Արդուլի փոկ-
րիկ բախչան, յերեխ Արդուլի տանը բոլորը քնած
են, ինչպես կզարմանա ֆաթման, ինչպես կու-
րախանա ֆաթման, ինչպես կուրախանա վա-
լին, ինչպես կզրկի Արդուլը յերեք տարվա
վորբացած ֆաթմային. շնուր Արդուլ, շուտ, այ-
ծյամի պես թոփր ցանկապատից, անցիր խա-
րաբ ելած բախչով, շրջիր գոմի կողմով ու...—
Աստված իւ—ալլահ այս ի՞նչ ե, բու նաև խա-
րար դի: Քարե փոքրիկ շինությունը վոչ ծածկ
ունի և վոչ պատուհաններ, գոների շրջանակ-
ները, պատերն ել են քանդված, միայն ոջախն
ե յերեսում սև մութ գիշերվա խավարի մեջ՝
ինչպես հաստ ու սեացած սյուն: Վոչ փայտյա
հավանոցը կա, վոչ ել մարագը, միայն ծառի
ճյուղերից շինած գոմի և մնացել, այն ել նրա
համար, վոր հարևաններն արդեն ուշացել եյին
մնացած ճյուղերը տանելու:

Արդուլը յերկու անգամ շրջեց իր քար ու
քանդ յեղած բնի շուրջը, հետո նստեց քանդ-
ված ցանկապատին և այնտեղից իր հորեղ-
բորորդի Սոհունին կանչեց.

— Սոհուն, գուրս արի, մի ճվա, կամաց
խոսիր, Արդուլն ե կանչում, Արդուլին ճանաչե-
ցիր, Արդուլ Քյարիմն եմ, քո հորեղբորորդին:

Վորտեղից յերեացիր դու այստեղ, Արդուլ:
ի՞նչ զրա ժամանակն ե, Սոհուն, ասա շնուր-
ասա Արդուլին, ի՞նչ ե պատահել նրա լնատանի-
քին, ինչո՞ւ յե քանդվել Արդուլի տունն ու բու-
նը, վորտեղ են ֆաթման...

— Յերբ խեղճ Զովը վախճանվեց, Ֆոթ-
ման մենակ մնաց, Ֆաթմային ոզնության յե-
կավ Արդուլի ազգական մի վորբեայրի կին,
բայց քիչ ժամանակից հետո նորից իր Արախ-
լու գյուղը վերադարձավ, հետո... այս լուրը
թող քեզ չվախեցնի, Արդուլ... հետո գյուղում
լուր տարածվեց՝ իբր թե քո նորար Ալի Ղուր-
բանն ու... Ֆաթման «քիշի-արվագ» դարձան.
լուրը ճշտվեց. Ֆաթման հղիացավ:

— Ալլահ, ալլահ:

— Վերջը Ֆաթման տղա ունեցավ:

— Ախ, աստված:

— Յերբ քո նամակն ստացավ ու իմացավ,
վոր դու «զալայից» շուտ դուրս կդաս, կազմա-
վես, տավարը ծախեց ու փախավ, ասում են
իբր թե Ալի Ղուրբանը Ղազախ ե տարել նրան:
Արդուլ, դոչաղ կաց, դու լավ տղամարդ ես,
աղալ-մաղալից խուսափիր, յերկու տարուց հե-
տո դու նորից կհարստանաս և մի սիրուն «զզին
ելի կճարես:

ի՞նչ ասաց Արդուլը, պարան. Արդուլ, ի՞ն-
չիդ ե պետք պարանը, կաց, Սոհունը պարան

ունի, այս ըոպելիս կրերի, բայց Արգուն ինչի՞ն համար ե ուզում պարանը. Ո՞ւր ես գնում, Արդուլ, մաիր Սոհունի տունը, քնիր ու վաղն առավոտյան...

— Սալամաթ, Սոհուն, սալամաթ:

Այս ասաց թե չե, արագությամբ մժության մեջ անհայտացավ. Մի քիչ ժամանակից հետո Մուսատափի տան կարին ուրվական յերևաց: Ուրվականը յերդիկի փայտից պարան կապեց ու պարանից կախվելով՝ արագությամբ իջավ տան մեջ:

Շատ շանցած, Մուսատափի տանից ինչվոր հառաջանքի ու «ալլահ»-ի յերդման ձայն երգալիս, հետո՝ կանանց, յերեխաների ու Մուսատափի հուսահատ աղաղակը լսվեց:

Քանի գնաց, կանանց ձիչն ու գոռոցը սաստկացավ: Հանկարծ ձիչը լոեց: Մուսատափի գոմից մի ուրվական գուրս թռավ ու անթամբ ձի հեծած՝ դեպի Սանդար սլացավ:

Դյուզում սարսափելի հարահրոց սկսվեց: Այս ու այն կողմից ճրագներով գուրս յեկան, լուրն իմացան, զայրացան, սակայն ձին սլացել անհետացել եր:

Արևն արդեն գուրս եր յեկել, յերբ արնաթաթախ թուրքը քրտինքի մեջ լողացած՝ ձիով Արթաճալի բանտին մոտեցավ:

— Եյ, ընկեր, գուռը բաց:

Բոլորը խառնվեցին, սկսվեց հեռախոսների զնգոցը. ով պիտի լինի, վոր այսպես թիթըլսկացնում ե յերկաթե դարպասը և այնպես պահանջմամբ ուզում ե ներս մտնել:

— Արգուն ե, Արգուլ Քյարիմը, ձեր նախկին բանտարկյալը, վորն Ավճալայիս վախել եր, բաց արեք գուռը, ինչու յեք սպասեցնում ժամերով, ինչ ե պատահել:

Արդյո՞ք Արգուն իշխանությունից վորեւ փաստաթուղթ ունի, թե վոչ: Ի՞նչ փաստաթուղթ, ինչ ժամանակն ե փաստաթղթի: Արգուլը «հինգ» մարդ ե սպանել, Արգուլը Բորչալից ե գալիս, այ քեզ փաստաթուղթ: Արգուլը կանանց ու յերեխաների արյունով ե թաթախված, ահատեսներ:

— Բաց արա գուռը, ընկեր, բաց, թե չե կգամ ու հետո՝ փնտոեցեր...

Մինչեւ վոր քաղաքի դատախազն ու քննիչը չեկան, Արգուլին ներս չթողին, Մի ժամ անեց ըննությունը և արձանագրություն կազմելը: Հետո արյունաթաթախ Արդյուն բանտի բակը յեկավ ու այնտեղ հավաքված բանտարկյաներին կանչեց.

— Բարե ձեզ, յոլդաշլար, բարե ձեզ ընկերներ, այ, ձեր Արգուլը վերադարձավ, հիմա Արգուլ, Քյարիմ ողին դաշաղ ե, մեծ դաշաղ. հինգ մարդ ե սպանել, հինգ մարդ.— ու Արգուլը հինգ արյունաթաթախ մատները կերպների պես ցցեց—մեկը՝ Մուսատափին, մյուսը՝ նրա

սիրուն կնոջը Զեյնաբին, նրա մորը ու «բալա-
ջա» յերեխաներին:

Այս վերջացրեց թե չե, արագ գլխիկոր իր
նախկին սենյակը վաղեց:—Մի քանի ամսից հե-
տո Արդուլը նորից այն մեծ դահլիճում եր
կանգնած, փորտեղ յերեք տարի առաջ տասը
տարին «շալակեց»:

Մեծ դահլիճը դարձյալ ժողովրդով եր լցվել,
բայց այս անգամ վոչ Զովբն եր յերեսում և վոչ
ել սեաչյա Ֆաթման, մենակ եր հիմա Արդուլը,
մեն՝ մենակ:

Միայն «յոլգաշ» Շաբրոն չմոռացավ, մտա-
բերեց ու յեկավ, հեռվից բթամատով նշան ա-
րեց ու սիրտ տվեց: Դատավորները դարձյալ
այն սենյակից դուրս յեկան ու դարձյալ նույն
սեղանի մոտ նստեցին:

—Արդուլ Քյարիմ ողի, պատմեցեք ձեր
արածը:

Արդուլը յերեք տարվա ընթացքում բավա-
կանին վարժվել եր. ամբիոնին հենվեց, յերեք
տարվա տանջանքը կարճառոտ պատմեց, հետո
դեպքը շարունակեց— Յես Ավշալայում եյի աշ-
խատում, փախչել չեյի ուզում, վալլա, չեյի
ուզում, յերեք ամիս եր մնացել: Քաղաքում մի
յոլգաշ ու դուրջի լավ դարդաշ ունեմ: Մի որ
այն դարդաշն իմաց տվեց:—յեղբայր Արդուլ,
զյուղում քո գործերը շտու վատ են. ել սիրտ
չհամբերեց, ասացի—գնամ, խաբար առնեմ, ու
հենց այսոր վերադառնամ. գնացի: Բայց...—ախ,

—վոչ տուն, վոչ կին, վոչ ել յերեխաս: Իմ
կնկան՝ Թաթմային ու յերեխիս իմ նոքար Ալի-
դուրբանը փախցրել ե ու Ղազախ տարել. մի քիչ
տավարն եր մնացել, այն ել ծախել եյին ու տա-
րել, տունս հարեաններս քանդել եյին ու տա-
րել, Արդուլին միայն սև ողախ, քիչ քար ու
շատ արցունք եր մնացել: Կործանվեց Արդու-
լը, քանդվեց ընտանիքս...Ասի՛ Արդուլ Քյարիմ,
ինչիդ ե պետք կյանքը, ել ում համար պիտի
ապրես, ով կործանեց քո գերդաստանը, ով քան-
դեց քո բունը, ով քեզ բանտ ուղարկեց.—Քո
յերորդին՝ Մուստաֆա Խալիլ ողին,—ասի
ու գնացի:

— Արդուլ Քյարիմ, նախքան Սոհունից կի-
մանայիր ընտանիքիդ մասին, ունեյի՞ր սրտումդ
Մուստաֆին սպանելու մտադրություն, թե վոչ:

— Աստված վկա չե, վալլահ չեյի ուզում,
թեն շատ քեն ունեյի, բայց վալլահ չեյի ուզում:

— Շարունակեցեք:

— Ինչպես գնացի՛ չեմ հիշում, պարան
տարա ու յերդիկից իջա: Մուստաֆան խոր ընած
եր, Զեյնաբը զարթնեց ու ճրագ վառեց,
ասի:— Զեյնաբը, յեթե ճասո, Մուստաֆին կըս-
պանեմ. հետո Մուստաֆին զարթեցրի, զգին
խանչալ դրի ու ասի:— Մուստաֆա, ասա՛ ի՞նչ-
պես թալանեցիր ուռւներին ու ի՞նչպես քո տեղ
Արդուլին բանտ ուղարկեցիր: Մուստաֆան ա-
սաց:— Արդուլ, աչառդ մենք գողացանք:

— Ինչպես թե մենք. բացի Մուստաֆից,
ել ովքեր եյին:

— Զգիտեմ — Մուստաֆան վոչինչ չպատասխանեց:

— Շարունակեցէք:

Մուստաֆան ասաց. — Մենք գիտեյինք, վոր Աբդուլն աշառը փնտուելու կղնա, հետո զնացինք մալականներին թալանելու, յերեք ոռւսից ապրանք ու փող վերցրինք ու հետ վերադարձանք: Անձրեային դիշեր եր, միլիցիան կարող եր հետքը գտնել; յես հետքը կորցրի ու հետքը ըստան առաջ բերի, մի քիչ ել թալանած ապրանքից թափեցի ու զնացի:

— Հետո ինչո՞ւ այդ ոռւսները քեզ մատնացուց արին:

— Նրա համար, վոր յես և Մուստաֆան հորեղբոր տղաներ ենք, նրանք շատ անգամ ինձ Մուստաֆա ելին կանչում, իսկ Մուստաֆային՝ Աբդուլ:

— Հետո, հետո.

— Հետո արյունը գլուխս խփեց, հիշեցի Զովրին... խեղճ մորս, իմ դարդից մեռավ...

Հիշեցի իմ վորդի Վալուն, իմ կնոջ՝ Թաթմային...

Հիշեցի իմ տավարն ու քանդված ոջախը ու...

Մուստաֆի վիզը խանչալ խրեցի...

— Հետո, հետո ինչ պատահեց:

— Հետո Մուստաֆի մո՞րն ինչպես սպանեցիր:

— Զգիտեմ, վալա, չգիտեմ:

— Հետո, Մուստաֆի կնոջը:

— Զգիտեմ, վալա չեմ հիշում:

— Յերեխանե՞րը, զո՞նե յերեխաներին խնայեցիք:

— Զգիտեմ... վալա, չգիտեմ, չեմ հիշում, վոչինչ չեմ հիշում...

— Կանչեցէք վկային:

Մուստաֆան մի պառավ ազգական կին ուներ տանը, այն կինն այնպես եր կուչ յեկել մութ անկյունում ու ազատվել, վոր Աբդուլը վոչինչ չեր նկատել: Այն կինն Աբդուլի խոսածը և Մուստաֆի ասածն ել հաստատեց:

— Աբդուլ Քյարիմ ողլի, ասա քո վերջին խոսքը:

— Յոլդաշ դատավորներ, ել ի՞նչ պիտի ասի Աբդուլը, նա իր զլխով անցածը պատմեց ու իր անկեղծ սիրաը բաց արեց ձեր առաջ, գուք ամեն ինչ լսեցիք ու տեսաք, Աբդուլը վոչինչ չունի ծածկած:

— Այժմ ձեր գործը դուք զիտեք, բայց մի բան արեք, Աբդուլի կյանքը վերջացավ, յես ել ապրել չեմ ուզում, կամ ջուրը զցեք, կամ հրացանազարկ արեք և կամ թե չե՛ պարանով կախեցէք: Յոլդաշներ, զարդաշներ... յեղբայրներ և ընկերներ, յես բանտ չեմ ուզում, վալա, չեմ ուզում:

Յեկ Բորչալվեցի թուրքը նորից խայտառակվեց, յերեսի վրա ընկավ, ուժգին հեկեկաց ու մորթվող յեղան պես բառաչեց:

— Չեմ ուզում բանտ... չեմ ուզում... չեմ, չեմ...

Քարձյալ նորյնը յեղավ, ինչ վոր յերեք տարի առաջ:

Դատավորները գնացին ու չորս ժամից հետո նորից ներս մտան:

Նախագահը յերկար դատավճիռը կարդաց.

— Յեվ Աբգուլ Քյարիմը դատապարտվում է տասը տարի բանտարկության, սակայն, վորովհետև... ի նկատի ունենալով, վոր... վորոշեց՝ պատիժը համարել պայմանական:

Աբգուլը չհասկացավ, ուժեղ ցնցվեց ու վիրավոր գաղանի պես մոնչաց.

— Ալլահ, բու նա խարար դի... Յոլդաշներ, այս ի՞նչ խարար եւ: Աբգուլ Քարիմ ողի, ազատ ես, գնա ու ապրի:

Հարված հարվածի հետեւց— Աբգուլը թուլացավ, ծնկները ծալվեցին: Այս ի՞նչ ասաց «յոլդաշ» դատավորը. ի՞նչպես, Աբգուլը ազմտ ե. ի՞նչ, Աբգուլը «գնա», հետո «բանտ»... հետո «բանտ» չի լինելու:

— Աբգուլ, այսոր իմ հյուրն ես, ասում եք Շաքրո դարդաշը:

Աբգուլը յերկրորդ հարվածին չդիմացավ ու հեկեկանքի հետ բարձր քրքջաց, յերկար ձեռքերը թեփերի պես բացեց, արջի նման մըթմըթաց:

— Յոլդաշ—ար, յոլդաշ—ար... յեղբայրներ... ընկերներ...

Աբգուլը կենդանի յե... Աբգուլն անմեղ ե... Աբգուլն արդար մարդ ե:

Յոլդաշներ... դարդաշներ... շնորհակալութեալ մաթիւն շնորհակալ... չոխ սարդու, չոխ սալամաթիւն մաթ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0376023

74.761



ԽՖ 1
ԳԴ 2

ԳԻՎԸ 12 ԿՈՊ.

899.962.1
Ձ-36